ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ԲՈՒՀԻ ԱՐՁԱԳԱՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԴՏ 378
DOI: 10.56246/18294480-2024.16-403

ԱԴԱՄՅԱՆ ՆԵԼԼԻ
ՇՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի դասախոս,
կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ nelliadamyan60@gmail.com

2021 թվականի փետրվարի 21-ին հաստատված հանրակրթության պետական չափորոշիչը առաջադրել է կրթական քաղաքականության նոր ուղենիշեր, որոնք մարտահրավերներ են նաև մանկավարժներ պատրաստող բուհերին: Այս հոդվածում առաջարկվում են հանրակրթության բարեփոխումներին բուհի արագ արձագանքման անհրաժեշտ քայլեր և արդյունավետ լուծումներ: Աշխատանքում անդրադարձ է կատարվել նոր, հաստատված պետական չափորոշչի դրույթներին և հետևյալ չորս առանցքային հասկացություններին. 1) ինտեգրված ուսուցում, 2) կոմպետենցիաների (կարողունակությունների) և վերջնարդյունքների վրա հենված ուսուցում, 3) ուսումնական պլանի անհատական բաղադրիչ ու հետազոտական աշխատանքներ, 4) ներառական կրթության կազմակերպում: Առանձնացված հասկացություններից յուրաքանչյուրի համար ներկայացվում է վերլուծություն, որոնք հիմնավորվում են բուհում երկար տարիների մանկավարժամեթոդական աշխատանքների, հանրապետության տարբեր մարզերում իրականացրած ուսուցիչների մասնագիտական, ներառական կրթության, նախաատեստացիոն և այլ բնույթի վերապատրաստումների, ինչպես նաև առաջարկվող մոտեցումներով ՇՊՀ-ի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրով «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացի ուսուցման մեր փորձով:

Դպրոցի պահանջների և սկսնակ մանկավարժի մասնագիտական, մեթոդական իմացության խզվածությունը հաղթահարելու նպատակով աշխատանքում առաջարկվում է բուհական «Դասավանդման մեթոդիկա» և

«Մանկավարժություն» դասընթացների ծրագրերում ներառել հանրակրթության բարեփոխումների պահանջներին համապատասխանող թեմաներ և ուսուցում կազմակերպել համապատասխան նոր մոտեցումներով:

Բանալի բառեր՝ *հանրակրթության պետական չափորոշիչ, «Մանկավարժություն», «Դասավանդման մեթոդիկա» դասընթացների ծրագրային փոփոխություններ, ինտեգրված ուսուցում, կոմպետենցիաներ, ներառական կրթություն:*

21.02.2021թ. հաստատված «Հանրակրթության պետական չափորոշիչ»-ն (ՀՊՉ) ուղենշում է առաջիկա տարիների ՀՀ հանրակրթության քաղաքականությունն ու զարգացման ուղին[1]:

Հետանկախացման տարիների հանրակրթության շարունակական բարեփոխումները չեն ուղեկցվել բուհերում մանկավարժական մասնագիտությունների կրթության կազմակերպման համապատասխան փոփոխությունների պահանջների առաջադրումով: Խզում է առաջացել դպրոցի պահանջների և մանկավարժի որակավորում ստացող ուսանողի գիտելիքների ու պատրաստվածության միջև: Եվ սկսնակ մասնագետը բուհն ավարտելուց անմիջապես հետո և մասնագիտական գործունեությունն սկսելու հենց առաջին օրվանից կարիք է ունեցել մանկավարժական ու մեթոդական նոր գիտելիքների ու կարողությունների իմացության:

Հանրակրթության կազմակերպման որակական փոփոխություն արձանագրելու համար հարկ է մտածել ժամանակակից դպրոցի մարտահրավերներին պատրաստ, 21-րդ դարի ուսուցիչներ կրթելու հարցի մասին, որը ենթադրում է փոփոխությունների արագ արձագանքման անհրաժեշտություն մանկավարժական կրթության կազմակերպման մեջ: Մեր կարծիքով՝ խնդրի լուծմանն ուղղված բուհի արձագանքի արագ, իրատեսական և արդյունավետ միջոցներից մեկը մասնագիտական ուսուցման կազմակերպման բարեփոխումն է՝ համապատասխան դասընթացների ուսումնական ծրագրերում դպրոցներին առաջադրվող նոր պահանջներն ուսուցանող թեմաների ներառումով ու կրթության կազմակերպման նոր մոտեցումների կիրառումով: Բնականաբար այն ենթադրում է նաև բուհերում համապատասխան մասնագետների վերապատրաստման անհրաժեշտություն, շարունակական կրթության ապահովում:

---

[1] Arlis.am: Հանրակրթության պետական չափորոշիչ, Կառավարության որոշում, հրաման N136-Ն, 24.02.2021թ., Ծանոթություն: Այսուհետ ՀՊՉ-ին անդրադարձը այս հղումով:

Հիմնավորելու համար մեր առաջարկը՝ հաջորդաբար կանդրադառնանք ՀՊՁ-ի՝ մեր կողմից առանձնացված չորս առանցքային հասկացություններին. 1) ինտեգրված ուսուցում, 2) կոմպետենցիաների (կարողունակությունների) և վերջնարդյունքների վրա հենված ուսուցում, 3) ուսումնական պլանի անհատական բաղադրիչ ու հետազոտական աշխատանքներ, 4) ներառական կրթության կազմակերպում (տե՛ս հղում 1): Զուգահեռաբար կներկայացնենք մեր վերաբերմունքը դրանց նկատմամբ և ուսուցման մեր փորձի մեթոդական մոտեցումները:

1) Ինտեգրված ուսուցում: Ի տարբերություն նախորդ ՀՊՁ-ի՝ հաստատված ՀՊՁ-ն նախատեսում է հանրակրթության 9 ուսումնական բնագավառների փոխարեն 7-ը: Որպես նոր անվանումով ուսումնական բնագավառ առանձնացվել են «Հայրենագիտություն»-ը, «Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն և մաթեմատիկա» (ԲՏՃՄ)-ն, իսկ ևս երկու բնագավառներ վերաձևակերպվել են: Նախկին «Հասարակագիտություն» բնագավառն այժմ կոչվում է «Հասարակություն, հասարակագիտություն», իսկ «Արվեստ» բնագավառը՝ «Արվեստ և արհեստ» (տե՛ս հղում 1): Ուսումնական բնագավառների նոր անվանումներն արդեն իսկ ենթադրում են դասընթացների ինտեգրում: Սակայն ինտեգրումը ոչ թե տարբեր առարկաների մեխանիկական միավորման արդյունք է կամ ենթադրում է առարկայական բովանդակության կորուստ, այլ հրամայական է դարձնում նոր կրթական նպատակների և ուսուցման մոտեցումների, ինտեգրված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտությունը:

Հանրակրթության իրական նպատակը մեկն է՝ սովորեցնել՝ ի՞նչ է կյանքը և կրթել կյանք մտնելու համար գրագետ, ինքնուրույն որոշումներ կայացնող, իրավիճակում կողմնորոշվող, իր և շրջապատի նկատմամբ հստակ վերաբերմունքով, և լոկալ ու գլոբալ միջավայրում իր տեղն ու դերը գիտակցող քաղաքացի: Այսպիսի վերջնարդյունքների իրականացումը հնարավոր է միայն հանրային մտածողության, կրթության նկատմամբ ընտանիքի և անհատի պահանջի ու վերաբերմունքի, համապատասխան կրթության բովանդակության՝ առարկայական ծրագրերի ու դասագրքերի, ուսումնական միջավայրի տեխնիկական զինվածության փոփոխման, վերջնարդյունքներ ապահովող համապատասխան մեթոդներին ու տեխնոլոգիաներին տիրապետող, բարեփոխումների գաղափարախոսությունը կրող մանկավարժների պատրաստման շնորհիվ: Սա ևս հիմնավորում է բուհերում նոր որակի ուսուցիչներ կրթելու անհրաժեշտությունը:

Ինտեգրված ուսուցումը միաժամանակ թելադրված է ՀՊՁ-ի բարեփոխումների այն տրամաբանությամբ, որ անհրաժեշտ է բեռնաթափել ուսումնական պլան-

ները, ազատվել կրթության բովանդակության ավելորդ կրկնություններից, կրճատել սովորողի պարտադիր ծանրաբեռնվածության ժամանակը դպրոցում և այլն:

Բնականաբար ինտեգրված դասընթացների ստեղծումն ու դրանցով ուսուցում կազմակերպելը ենթադրում է բուհում ինտեգրված ուսուցման տեխնոլոգիայի մշակում և կիրառում:

Բացի այն, որ մեր կողմից բուհում դասավանդվող «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացի ծրագրով ուսուցանվում են «Ինտեգրված ուսուցման առանձնահատկությունները» և «Ինտեգրված թեմատիկ միավոր» (ԻԹՄ) թեմաները, դրանց վերաբերող տեսական նյութեր և գործնական դասեր կազմակերպելու մեթոդական ուղեցույցներ առաջարկված են նաև ՇՊՀ-ում մեր կողմից իրականացված ներբուհական դրամաշնորհային ծրագրի արդյունքում հրատարակված «Ջուրը գիտելիքների խաչմերուկում» ուսումնամեթոդական ձեռնարկում[1], բնագիտության ուսուցմանը օժանդակող գեղարվեստական ստեղծագործությունների ներուժի բացահայտմանը նվիրված աշխատանքներում[2,3]:

2) Ինչ վերաբերում է ՀՊՁ-ի *կրթության բովանդակության բաղադրիչներին* վերաբերող հարցին, ընդգծենք, որ նախկին երեք՝ գիտելիք, կարողություն-հմտություն և արժեքային համակարգ բաղադրիչներին ավելացել է *4-րդ՝ դիրքորոշում* բաղադրիչը, ինչը դարձյալ բխում է փաստաթղթով պահանջվող կարողունակությունների (կոմպետենցիաների) և ուսումնառության վերջնարդյունքների վրա հենված ուսուցման տրամաբանությունից (տե՛ս հղում 1): Այն հրամայական է դարձնում կրթված քաղաքացի ունենալու համար ուսուցման գործընթացում գիտելիքի մեխանիկական վերարտադրության պահանջի փոխարեն գիտելիքն ու կարողությունը կյանքում կիրառելու հմտություններն ապահովող մոտեցումների կարևորումը, երևույթների նկատմամբ սովորողների վերլուծական ինքնուրույն կարծիքի ու վարքագծային վերաբերմունքի ձևավորումը:

Նշված պահանջը ընդգծում է վերը նշված բուհական դասընթացների ծրագրերում տեսականի համեմատ գործնական դասերի կշռի ավելացման և դրանց կազմակերպման նպատակների ու ձևի փոփոխության անհրաժեշտությունը: Մեր փորձում այդ տեսանկյունից կարևորվում են ուսումնասիրած տարբեր թեմաների ամրապնդման նպատակով ինտերակտիվ դասերի կազմակերպումը,

---

[1] Ադամյան Ն. Լ., Ջուրը գիտելիքների խաչմերուկում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Արման Ասմանգուլյան» ԱՁ հրատ., Երևան, 2018, 469 էջ:

[2] Ադամյան Ն. Լ., Քերոլի հնարամտությունների վերլուծությունը որպես ինտեգրված ուսուցման փորձ, «Նախաշավիղ», 4. Երևան, 2014, էջ 21-35:

[3] Ադամյան Ն. Լ., Հեքիաթները որպես բնագիտական գիտելիքների ուսուցման միջոց, ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր», Հատոր 1, Պրակ Բ, Գյումրի, 2016, էջ 198-209:

անհատական աշխատանքների կատարումը, լսարանային ակտիվ քննարկումները, վերլուծությունները, դրանց վերաբերյալ ինքնուրույն դիրքորոշումների արտահայտումն ու հիմնավորումը: Միջանկյալ կամ ամփոփիչ ստուգումների ժամանակ ձեռք բերած գիտելիքների, կարողունակություն-հմտությունների հիման վրա ուսանողը գնահատվում է՝ պատասխանելով ոչ թե մեխանիկական հիշողություն պահանջող հարցերի, այլ կատարելով «Վերլուծի՛ր համակուրսեցու կատարած ինքնուրույն աշխատանքի սխալներն ու հաջողված կողմերը», «Կազմի՛ր որևէ թեմայի վերաբերյալ առաջարկվող տիպի թեստային առաջադրանքներ, սխեմաներ, աղյուսակներ» և նմանատիպ այլ առաջադրանքներ: Ստուգման նման ձևի արդյունքները խթանում են ուսանողների սովորելու պահանջը, ապահովում քննարկվող հարցի վերաբերյալ սեփական կարծիք ձևավորելու և հիմնավորելու նախնական կարողությունների և հմտությունների զարգացումը:

3) Անհատական հետազոտական աշխատանքներ: ՀՊՁ-ում, հանրակրթության ուսումնական պլանում ժամերի բաշխման համար նախկին պետական և դպրոցական բաղադրիչներից բացի, ամրագրվել է նաև անհատական ընտրովի բաղադրիչը, որը ենթադրում է 7-12-րդ դասարաններում առնվազն մեկ առարկայից սովորողի համար պարտադիր հետազոտական աշխատանքի կատարում (տե՛ս հղում 1): Այս բաղադրիչը ճիշտ իրացնելու, աշակերտի աշխատանքի նախագծմանն ու իրականացմանը օժանդակելու համար ևս ուսուցչից նոր գիտելիքներ ու հմտություններ են պահանջվում: Նախորդ կետում ներկայացված մեթոդական մոտեցումը հիմք է հանդիսանում նաև սովորողների հետազոտական, նախագծային աշխատանքներ պլանավորելու, նպատակներ ու խնդիրներ ճիշտ ձևակերպելու և աշխատանքը կատարելու համար: Հենվելով բակալավրի և մագիստրատուրայի «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացներում «Հետազոտական աշխատանքներ կատարելու պահանջներ և դրանց ուսուցման մեթոդիկա» թեմայի ուսուցման մեր փորձի վրա՝ առաջարկում ենք այն ներառել նաև բուհական համապատասխան դասընթացների ծրագրերում, որը ոչ միայն կապահովի բուհական ուսումնառության ավարտին ավարտական կամ մագիստրոսական թեզերի գրագետ ու որակյալ կատարումը, այլև շրջանավարտ սկսնակ ուսուցչին կպատրաստի նաև դպրոցում աշակերտական նախագծեր ղեկավարելու մարտահրավերին: Նախագծային հետազոտական աշխատանք կատարելու և ձևակերպելու պահանջների ուսուցման մեթոդաբանությունը մեր կողմից լուսաբանված է նաև հրատարակված աշխատանքում[1]:

---

[1] Ադամյան Ն. Լ., Հետազոտական աշխատանք կատարելու հիմնական պահանջներ և դրանց ուսուցման մեթոդիկա, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», 2019-2, Պրակ Բ, էջ 530-542:

4) Անդրադառնալով մատնանշված 4-րդ՝ «Ներառական կրթության կազմակերպում» հասկացությանը, ձեր ուշադրությունը հրավիրում ենք այն փաստի վրա, որ 2015 թվականից սկսած՝ համընդհանուր ներառական կրթության կազմակերպման քաղաքականությունը հանրակրթական դպրոցներին նոր պահանջներ առաջադրեց, որոնք սկզբունքորեն տարբերվում են մինչ այդ միայն արտոնված դպրոցներում ներառական կրթության կազմակերպման քաղաքա-կանությունից: Հանրապետության տարբեր մարզերում այն աստիճանաբար ներդրվեց և 2023 թվականից իրականացվելու է բոլոր դպրոցներում: Այն լուրջ մարտահրավեր է ոչ միայն դպրոցների ղեկավարության և ուսուցիչների, այլև ամբողջ հասարակության համար, պահանջում է ինչպես մանկավարժների մտածողության, այնպես էլ ուսումնամեթոդական գործունեության փոփոխություն[1,2]: Ուստի գտնում ենք, որ ապագա մանկավարժ շրջանավարտը բուհական ուսում-նառության ժամանակ պետք է ուսումնասիրի նաև «Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները» թեման՝ հետագա մասնագիտական գործունեության ճիշտ կազմակերպման համար: Դա ևս թելադրում է բուհական նշված դասընթացներում ծրագրային բարեփոխումների և ուսուցման մոտեցումների վերանայման անհրաժեշտություն: Մեր փորձում այդ թեման նույնպես ներառված է «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացի բակալավրի և մագիստրատուրայի ծրագրերում: Բացի դրանից՝ թեմայի շրջանակում ուսուցանված պահանջներով ընթացիկ անհատական, ինքնուրույն գործնական և ծրագրային հետազոտական աշխատանքների (կուրսային, ավարտական, մագիստրոսական թեզեր, զեկույցներ) կատարումը ուսանողների կողմից ևս ապահովում են գրագիտություն և զարգացնում անհրաժեշտ հմտություններ:

Ոչ միայն դասավանդման, այլև մատնանշված ուղղվածությամբ մեր կողմից իրականացված ուսուցիչների և տնօրենների վերապատրաստումների, մոնիթորինգների, տարբեր փորձագիտական աշխատանքների արդյունքների վերլուծության հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական կրթության կազմակերպման մեթոդական մոտեցումները հանրայնացվել են նաև մի շարք աշխատանքներում [3, 1]:

---

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում (ընդունված՝ 10.07. 2009թ) լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՀ ԿԳ նախարարի 2014թ. դեկտեմբերի 1-ին (ՀՕ-200-Ն):

[2] Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք//Մինեապոլիս, ԱՄՆ, Մինեսոթայի համալսարան, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան, 2019, 252 էջ:

[3] Ադամյան Ն. Լ., Գդլյան Գ., Ներառականության որոշ հասկացություններ՝ բնագիտական մեկնաբանություններով, «Բնագետ», 2, Երևան, 2020, էջ 15-22:

Այսպիսով, առանձնացված հասկացությունների վերլուծման և մեր փորձի դրվագների ներկայացման նպատակն էր հիմնավորել, որ մասնագիտական առարկայական ծրագրերում փոփոխությունների կատարումն ու մեթոդական նոր մոտեցումներով բուհերում մանկավարժական մասնագիտությունների կրթության կազմակերպումն իրագործելի ու իրատեսական ճանապարհ է՝ ի շահ հանրակրթությունը կարողունակ մասնագետներով համալրելու և հանրակրթության բարեփոխումների իրագործման արդյունավետության:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ադամյան Ն. Լ., Ջուրը գիտելիքների խաչմերուկում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Արման Ասմանգուլյան» ԱՁ հրատ., Երևան, 2018, 469 էջ:

2. Ադամյան Ն. Լ., Քերոլի հնարամտությունների վերլուծությունը որպես ինտեգրված ուսուցման փորձ, «Նախաշավիղ», 4, Երևան, 2014, էջ 21-35:

3. Ադամյան Ն. Լ., Հեքիաթները որպես բնագիտական գիտելիքների ուսուցման միջոց, ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր», Հատոր 1, Պրակ Բ, Գյումրի, 2016, էջ 198-209:

4. Ադամյան Ն. Լ., Մասնագիտական կրթության դերը դպրոցում ներառական ուսուցման կազմակերպման գործում, ՇՊՀ, «Գիտական տեղեկագիր», 1, Պրակ Բ, Գյումրի, 2020, էջ 146-156::

5. Ադամյան Ն. Լ., Հետազոտական աշխատանք կատարելու հիմնական պահանջներ և դրանց ուսուցման մեթոդիկա, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», 2, Պրակ Բ, Գյումրի, 2019, էջ 530-542:

6. Ադամյան Ն. Լ., Գդլյան Գ., Ներառականության որոշ հասկացություններ՝ բնագիտական մեկնաբանություններով, «Բնագետ», 2, Երևան, 2020, էջ 15-22:

7. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում (ընդունված 10.07.2009թ.) լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք ՀՀ ԿԳ նախարարի 2014թ. դեկտեմբերի 1-ին (ՀՕ-200-Ն):

8. Ներառական կրթության ռազմավարություններ, Դասագիրք, Մինեապոլիս, ԱՄՆ, Մինեսոթայի համալսարան, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան, 2019, 252 էջ:

9. Arlis.am: Հանրակրթության պետական չափորոշիչ, Կառավարության որոշում, հրաման N136-Ն, 24.02.2021թ.:

---

[1] Ադամյան Ն. Լ., Մասնագիտական կրթության դերը դպրոցում ներառական ուսուցման կազմակերպման գործում, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», 2020-1, Պրակ Բ, Գյումրի, 2020, էջ 146-156:

ON THE NEED AND POSSIBILITY OF RESPONDING TO GENERAL EDUCATION REFORMS BY PEDAGOGICAL UNIVERSITIES

ADAMYAN NELLI
PhD in Biological Sciences,
Associate Professor, Department of Biology and Chemistry, ShSU
e-mail: nelliadamyan60@gmail.com

The state standard of general education, approved on February 21, 2021, put forward new educational policy guidelines that set new challenges for universities that train teachers. The presented methodological work offers the necessary steps and effective solutions for the rapid response of the university to the reforms of general education which include 1) integrated learning, 2) learning based on competencies (skills) and outcomes, 3) individual components of the curriculum and research work, 4) organization of inclusive education.

The work on each of the above individual concepts presents an analysis based on our many years of experience in pedagogical and methodological work at the university, as well as pre-certification and other (including inclusive education) trainings for teachers in different regions of the republic.

Methodological approaches of our experience in teaching the course "Methods of Teaching Biology" in Bachelor's and Master's degree programs of ShSU to address the issues raised by us.

In order to bridge the gap between the requirements of the school and the professional, methodological competencies of the newly graduated teacher, it is recommended to reflect the requirements of the general education reform in the programs of the university courses entitled "Methods of Teaching" and "Pedagogy" and change the approaches and teaching methods.

Keywords: *State standard of general education, program changes in "Teaching methodology" and "Pedagogy" courses, integrated learning, competence, inclusive education.*

О НЕОБХОДИМОСТИ И ВОЗМОЖНОСТИ ОТКЛИКА ПЕДАГОГИЧЕСКИХ ВУЗОВ НА РЕФОРМЫ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ

АДАМЯН НЕЛЛИ
Кандидат биологических наук
Доцент кафедры биологии и химии ШГУ
Электронная почта: nelliadamyan60@gmail.com

Государственный стандарт общего образования, утвержденный 21-ого февраля 2021 года, выдвинул новые ориентиры образовательной политики, которые ставят новые задачи перед вузами, готовящими педагогов. Представляемая методическая работа предлагает необходимые шаги, для быстрого реагирования вуза на реформы общего образования. В статье обсуждаются следующие четыре ключевые понятия, выдвинутые в государственном стандарте общего образования: 1) интегрированное обучение, 2) обучение на основе компетенций (умений) и конечных результатов, 3) индивидуальные компоненты учебной программы и научно-исследовательские работы, 4) организация инклюзивного образования.

В работе по каждой из перечисленных выше отдельных понятий представлен анализ, основанный на нашем многолетнем опыте педагогико-методической работы в вузе, а также предаттестационных и других (в том числе и по инклюзивному образованию) тренингах педагогов в разных регионах республики.

Предложены методические подходы нашего опыта преподавания курса «Методика преподавания биологии» в бакалаврской и магистерской образовательных программах ШГУ по решению выдвинутых нами вопросов.

С целью преодоления разрыва между требованиями школы и профессиональными, методическими компетенциями выпускника-начинающего педагога рекомендуется отразить требования общеобразовательной реформы в программах вузовских курсов «Методика преподавания» и «Педагогика» и изменить подходы и методы обучения.

Ключевые слова: *государственный стандарт общего образования программные изменения курсов «Методика преподавания» и «Педагогика», интегрированное обучение, компетенция, инклюзивное образование.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.03.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 23.03.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: